**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2025 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-25-Ը ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ԲԵԼԳՐԱԴ)**
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Արևիկ Արզոյան, ՀՀ ՏԿԵՆ արտաքին կապերի վարչության միջազգային համագործակցության բաժնի ավագ մասնագետ

2. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Սերբիայի Հանրապետություն (ք. Բելգրադ), 2025 թվականի հոկտեմբերի 19-25

3. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Գերմանական միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

4. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համաֆինանսավորվող և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման (SE4Resilience)» ծրագրի շրջանակում «Էներգետիկայի ոլորտում թվային գործիքներ» թեմայով ուսումնական այցի նպատակը Հայաստանի պատվիրակությանը ծանոթացնելն էր էներգետիկայի ոլորտում թվային գործիքների կիրառման Սերբիայի փորձին, էներգետիկ համակարգի կառավարման սերբական մոտեցումներին:

5. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ՝**

Այցի շրջանակում սահիկաշարերի և ինտերակտիվ քննարկումների միջոցով ներկայացվել և քննարկվել են Սերբիայի էներգետիկայի ոլորտում կիրառվող թվային գործիքակազմերը, Սերբիայի էլեկտրաէներգիայի շուկայի կառուցվածքն ու առանձնահատկությունները,

ոլորտում արհեստական բանականության հետագա կիրառման կոնցեպտները, էներգահամակարգի անվտանգության համակարգում թվային լուծումները:

6. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Ուսումնական այցի շրջանակում հայկական պատվիրակությունն այցելել է (Բելգրադ և Նովի Սադ քաղաքներում) «Էլեկտրաէներգիայի համակարգման կենտրոն» (EKC), «ElektroMreža Srbije» (EMS), «Շնայդեր Էլեկտրիկ», «Էլեկտրովոյվոդինա» «SEEPEX» կազմակերպություններ, SCC օբյեկտներ (կարգավարման սենյակ):

7. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Հաշվի առնելով գործուղման բնույթը (ուսումնական այց)՝ պաշտոնական որոշումներ չեն կայացվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

Բանավոր՝ ոչ պաշտոնական պայմանավորվածություններ են ձեռք բերվել էներգետիկայի ոլորտում Սերբիայի ոլորտային կառույցների հետ հնարավոր համագործակցության ծավալման շուրջ, ինչպես նաև էներգետիկայի ոլորտի հայ մասնագետների կարողությունների զարգացման նպատակով սերբ գործընկերների հետ հեռավար ձևաչափով լրացուցիչ հանդիպումների կազմակերպման վերաբերյալ:

8. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ՝ ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Հաշվի առնելով գործուղման բնույթը (ուսումնական այց)՝ հստակ սահմանված ժամկետներով կատարման ենթակա պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել:

9. **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ**

*Արևիկ Արզոյան՝*

*29.10.2025թ.*